

ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵԴԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, **Երուսաղեմ.**
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ, **Ստամբուլ.**
ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ, **Բեյրութ.**
ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ:

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Քրիստոսի սուրբ ծննդյան լույս ավետիսով կշնորհավորենք վՀեվ և Ս. Էջմիածնեն կհղենք Մեր օրհնությունը տիրախնամ թեմիդ հոգևոր դասուն, թեմական և եկեղեցական խորհուրդներուն, նաև Ձեր եկեղեցասիրաց օժանդակ բոլոր կազմակերպություններուն:

Խաղաղության և-ի մարդիկ հաճության աստվածային պատգամը թող մեր օրերուն ալ լուսավորե մարդկային աշխարհը և ժողովուրդներ ու պետություններ միասին ողջունեն ծնունդը Արդարության արեգակին, որ գերագույն հույսն է և Փրկիչը ապգի մարդկան:

Կաղոթենք նաև վասն խաղաղության և միության մեր Ս. Եկեղեցիին և մեր հարավատ ժողովուրդին:

Սիրո ողջունիվ և օրհնությամբ՝

ՎԱՉԳԵՆ Ա
Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս
Ամենայն Հայոց

ԷՋՄԻԱԾԻՆ

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության կենտրոնական վարչության նախագահ պր. Ալեքս Մանուկյանին (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ավերեդո Պերտիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբի նախագահ պր. Երվանդ Աղաճանյանին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Բեյրութ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց վանական կազմակերպություններին, Մայր Աթոռի և Հոգևոր Ճեմարանի բարերարներին և ծանոթ ապգային դեմքերին:

ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Ս. Ծննդյան և նոր տարվան բարեբաստիկ առիթով, մեր և միաբանության անունով խոնարհաբար կշնորհավորենք Ձերդ Ս. Օծությունը, մաղթելով երկար կյանք, երջանկություն և բարօրություն:

ԵՂԻՇԵ ՊԱՏՐԻԱՐՔ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

Ամանորի և Ս. Ծննդյան տոներու առթիվ սրտագին շնորհավորություններ մեր կողմե և հանուն հոգևորական դասու և համայնքային մարմիններուն և հավատացյալ հոտին, մաղթելով երկար և արդյունավոր տարիներ Վեհիդ:

ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ

ՍՏԱՄԲՈՒԼ

Փրկչի Ծննդյան և Աստվածահայտնության տոնին և ամանորի առթիվ ընդունեցեք իմ ջերմագին շնորհավորություններն ու բարեմաղթությունները Ձեր թանկագին կենաց և Մայր Աթոռի բարեվարդության համար:

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՅՐՈՒԹ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաջերմ և հարգալից զգացմունքներով գրված բազմաթիվ այլ շնորհավորական հեռագրեր և նամակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերից, թեմական առաջնորդներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ